ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

# ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

## ԻՆՉՊԵՍ Է ԸՆԿԱԼՎՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԱՆ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

19 Սայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Արևմտյան հետազոտողները, որպես կանոն, պնդում են, որ Հարավային Կովկասը միշտ էլ գտնվել է Արևմուտքի քաղաքականության գերակայությունների ցանկում: Այնուամենայնիվ աշխարհում միշտ էլ գոյություն ունեն խնդիրներ, այլ հակամարտություններ կամ վտանգներ, որոնք շեղում և թույլ չեն տալիս, որպեսզի իրագործվող արևմտյան քաղաքականությունն ամբողջապես կենտրոնանա Հարավային Կովկասի շուրջ: Իրականությունն այն է, որ մեր տարածաշրջանը միշտ էլ դուրս է մնում արևմուտքի թիվ մեկ գերակայություն լինելուց:

Տպավորություն է ստեղծվում, որ Արևմուտքը պարզորոշ չի պատկերացնում, թե իրականում ինչու՞ է իրեն անհրաժեշտ Հարավային Կովկասը: Դա ադրբեջանական նավթի՞ գործոնն է, անվտանգությա՞ն խնդիրներն են, պարզապես ի հեճուկս Ռուսաստանի՞, թե՞ մեկ այլ գործոնով պետք է պայմանավորել: Թերևս հենց սրանով կարելի է բացատրել, որ այս տարածաշրջանի հանդեպ արևմտյան հստակ քաղաքականություն կարծես գոյություն չունի:

Միևնույն ժամանակ, վերջին զարգացումները ցույց են տալիս, որ մեր տարածաշրջանի բոլոր երկրներում ամերիկյան զինված ուժերի աստիճանական մուտքը կարծես դառնում է անխուսափելի: Այն, թերևս, միայն ժամանակի հարց է:

Ստեղծվել է մի իրավիճակ, երբ յուրաքանչյուր ոք Արևմուտքում ցանկանում է Հարավային Կովկասի երկրները տեսնել որպես մեկ միավոր: Արևմտյան գործիչներն այսօր նաև չեն թաքցնում, որ ցանկանում են տեսնել Վրաստանում իրականացվող փոփոխությունները նաև հարևան երկու հանրապետություններում: Խոսքն այստեղ ոչ թե իշխանափոխության, այլ ձեռնարկվող քայլերի մասին են:

Ներկայում Եվրոպան ու Ամերիկան աչալրջորեն հետևում են Վրաստանին: Ակնկալվում է աբխազական, օսեթական խնդրիների խաղաղ լուծում հնարավոր կարճ ժամկետներում: Ամերիկյան որոշ վերլուծաբաններ կարծում են, որ Վրաստանի նախագահի անձնական պարբերական հաղորդակցությունները ՌԴ նախագահի հետ կօգնեն այդ խնդիրների լուծմանը: Միևնույն ժամանակ կարծիք կա, որ աշխարհի ուշադրությունը կշարունակվի բևեռված մնալ Կովկասին միայն այն դեպքում, եթե Վրաստանին իրապես հաջողվի վերոհիշյալ զարգացումներն ապահովել: Փաստորեն ստացվում է, որ Հարավային Կովկասի հետագա դերը արևմտյան քաղաքականության հարթությունում հիմնականում կապվում է Վրաստանի այսօրվա զարգացումների հետ:

Շարունակում է օրակարգում մնալ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցը: Արևմուտքում կարծիք կա, որ Քի-Վեսթում կողմերն ամենամոտն էինք խնդրի լուծմանը, սակայն Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը պատրաստ չեղավ առաջարկվող լուծումները հրամցնել սեփական ժողովրդին: Սակայն Քի-Վեսթն Արևմուտքում հույսեր թողեց, որ խնդիրն, այնուամենայնիվ, հնարավոր է լուծել որոշակի կոնկրետ ժամկետներում:

Գաղնիք չէ, որ հարավկովկասյան երեք հանրապետությունները, թեև տարբեր ճանապարհներով, այնուամենայնիվ ունեն միևնույն նպատակադրումը՝ դեպի Եվրոպա: Մինչդեռ եվրոպացիների կողմից Հարավային Կովկասի, Ուկրաինայի և դեպի Եվրոպա ձգտող այլ պետությունների հնարավոր եվրոպականացումն իրականում դիտարկվում է որպես նոր գլխացավանք: Այս համատեքստում այսօր Եվրոպայի թիվ մեկ գլխացավանքը Թուրքիան է:

Այսօր, թուրքական նոր իշխանությունների վարած քաղաքականությունը տարբերվում է դասական թուրքական քաղաքականությունից: Թուրքիան մշտապես վտանգներ է տեսել գրեթե բոլոր իր հարևանների կողմից (Արաբական երկրներից, Հայաստանից, Իրանից, Բալկանյան երկրներից, Հունաստանից և այլն): Այս միտումն այսօր կարծես փոխվում է: Ամեն դեպքում այդպիսի կարծիք կա Արևմուտքում:

2000 թվականից հետո Թուրքիան հստակորեն գիտակցեց, որ վերջնականապես կորցրել է Կոնտրոնական Ասիան որպես հնարավոր ազդեցության ոլորտ: Մնում էր բոլոր ուժերը կենտրոնացնել Հարավային Կովկասի վրա: Թուրք-ադրբեջանականի կողքին ուժեղացավ թուրք-վրացական համագործակցությունը ռազմական բնագավառում: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ Հարավային Կովկասի վրա իր ազդեցությունը պահպանելու և զարգացնելու համար Միացյալ Նահանգներն այսօր այլևս չունեն Թուրքիայի կարիքը:

Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան հարթության մեջ քաղաքականության մի որոշակի դինամիկա է ձևավորվել ու կարծրացել, որը բավական դժվար կլինի ջարդել: Այստեղ թերևս անհրաժեշտ է բոլոր կողմերի հստակ դիրքորոշումը և հայտարարումը, որ պատրաստ են փոխել ձևավորված դինամիկան:

*Համառոտագիրը մշակվել է հունիսի 29-ին ՄՁՄԿ-ում տեղի ունեցած «Ինչպես է ընկալվում Հարավային Կովկասն Արևմուտքում. հակամարտությունների կարգավորման հեռանկարները» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին հայ և արտերկրյա վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*